# ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

## ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳՈՒՐԳԵՆ ՍԵՎԱԿԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Լրացավ հայ լեզվաբանական մտքի հեղինակավոր ներկայացուցիչներից մեկի՝ Գուրգեն Սևակի (Գուրգեն Գրիգորի Գրիգորյան) ծննդյան 100 տարին: Ապագա գիտնականը ծնվել է 1904 թվականին Թիֆլիսում, բանվորի ընտանիքում: Սովորել է Ներսիսյան դպրոցում, ապա 16-րդ ուսումնարանում: 1924 թ. գալով Երևան՝ նա ընդունվում է պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը, որն ավարտում է 1928 թվականին: Այնուհետև՝ 1929 թվականին, ընդունվում է համալսարանի ասպիրանտուրան, որն ավարտում է 1932-ին:

Գուրգեն Սևակի մանկավարժական գործունեությունն սկսվում է 1930 թվականից, երբ նա սկսում է դասավանդել հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում (պետական համալսարան, մանկավարժական ինստիտուտ և այլն): ՀՍՍՀ լուսժողկոմատի որոշմամբ՝ 1937 թվականին Գուրգեն Սևակին շնորհվում է դոցենտի կոչում: Իբրև թեկնածուական դիսերտացիա նա ներկայացնում է իր «Խոսքի մասերի ուսմունքը» աշխատությունը, որը պաշտպանում է 1940 թվականին, իսկ 1948-ին նա իբրև դոկտորական ատենախոսություն փայլուն կերպով պաշտպանում է «Ժամանակակից հայոց լեզվի համառոտ պատմություն» աշխատությունը՝ ստանալով բանասիրական գիտությունների դոկտորի, ապա պրոֆեսորի կոչում:

Գուրգեն Սևակը 1932-39 թթ. աշխատել է Հայաստանի մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտում՝ ղեկավարելով լեզվի բաժանմունքը: Այնուհետև նրա ողջ գործունեությունը կապվում է համալսարանի հայոց լեզվի ամբիոնի հետ: 35 տարուց ավելի (1941-1977) նա եղել է հայագիտական կադրերի պատրաստման դարբնոցի՝ հայոց լեզվի ամբիոնի անփոփոխ վարիչը: Հաշվի առնելով նրա մեծ ծառայությունները հայրենի լեզվաբանական գիտության ասպարեզում՝ 1956 թ. նրան ընտրում են ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1971-ին ակադեմիկոս:

Գուրգեն Սևակի անունը սերտորեն շաղկապված է նորագույն հայ լեզվաբանության բոլոր փուլերի հետ: Ավելի քան 40 տարվա գիտամանկավարժական գործունեությամբ

նա խոր հետք է թողել հայ լեզվաբանական մտքի անդաստանում՝ միաժամանակ պատրաստելով նաև բազմաթիվ լեզվաբան-մասնագետներ:

Հանդես գալով լեզվաբանական գիտության ամենատարբեր բնագավառներում՝ Գուրգեն Սևակը միշտ էլ նոր, թարմ խոսք է ասել՝ չերկնչելով բանավեճի մեջ մտնել իր մեծահամբավ ուսուցիչների՝ Հրաչյա Աճառյանի և Սանուկ Աբեղյանի հետ:

Գուրգեն Սևակի գործունեությունը 1930-ական թվականներին բնութագրվում է լեզվաբանական տարբեր հարցերի մարքսիստական լուսաբանմամբ: Այդ թվականներին նա գրում է «Լենինը և դիալեկտիկական օրինաչափությունները լեզվի մեջ», «Շարահյուսության մի քանի հարցեր մարքս-լենինյան լույսի տակ» և այլ ուսումնասիրություններ, որոնց վերնագրերն արդեն իսկ պատկերացում են տալիս գիտնականի հետաքրքրությունների և ժամանակի բարքերի մասին: Ուշագրավ երևույթ էր 1939 թվականին Գուրգեն Սևակի «Խոսքի մասերի ուսմունքը» աշխատության լույս տեսնելը, ուր հեղինակը, քննադատելով խոսքի մասերի վերաբերյալ մինչ այդ եղած սկզբունքները, դրանց տարբերակման հիմքում դնում է իմացաբանական սկզբունքը զանց չառնելով նաև բառի ձևաբանական առանձնահատկությունները և շարահյուսական գործառությունները: Նրա այդ սկզբունքները երկար ժամանակ ուղենիշ են եղել հայ լեզվաբանների համար: Գուրգեն Սևակը սկզբունքային քննադատության էր ենթարկում Մառի ուսմունքի մի շարք առանցքային դրույթներ և միայն 1946-48 թթ., երբ մառականությանը հակադրվելը հոդի էր բազում հետևանքներով, նա տեղի է տալիս և զիջում իր դիրքերը: 1950 թ. հայտնի բանավեճից հետո նա վերանայում է իր հայացքները և նոր եռանդով լծվում ստեղծագործ աշխատանքի: Իր «Ժամանակակից հայոց լեզվի համառոտ պատմություն» ուշագրավ աշխատության մեջ նա պարբերացնում է գրական աշխարհաբարի պատմությունը՝ առավել մանրամասնությամբ անդրադառնալով նրա առանձին դրվագներին:

1955 թ. լույս է տեսնում պրոֆեսորի «Ժամանակակից հայոց լեզվի դասընթացը»: Ճշմարտության դեմ մեղանչած չենք լինի, եթե ասենք, որ հայոց լեզվի տեսության այս բուհական դասագիրքը, լինելով իր տեսակի մեջ առաջինը, աչքի է ընկնում նյութի ընդգրկման խորությամբ ու ամբողջականությամբ: Ինչպես նշում է ակադ. էդ. Աղայանն իր «Հայ լեզվաբանության պատմության» մեջ. «Գ. Սևակի այս աշխատությունը Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն» մենագրությունից հետո մեր գրական լեզվի ամենալուրջ ուսումնասիրությունն է և խոշոր ներդրում է հայերենագիտության բնագավառում»:

Այս գրքում պրոֆ. Սևակն արտահայտում է ժամանակակից հայոց լեզվի կազմավորման, գրաբարի և բարբառների փոխհարաբերության,

հնչույթի և ձևույթի տեսության, հայերենի բառապաշարի շերտերի և այլ կենցոտ հարցերի վերաբերյալ ուշագրավ տեսակետներ՝ հաճախ սեփական մանրակրկիտ հետազոտությունների հիման վրա կատարելով մի շարք եզրահանգումներ:

Հետագա տարիներին նրա հրատարակած հոդվածների և ուսումնասիրությունների թվարկումն իսկ կարող է պատկերացում տալ հետաքրքրությունների այն լայն շրջանակի մասին, որ ընդգրկում է հեղինակի պրպտող միտքը: Դրանցում քննվում են հայ լեզվաբանության համար կենսական նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսին են հայերենի ուղղագրությունը, տերմինաբանությունն ու տառադարձումը, գեղարվեստական գրականության լեզվի և ոճի հարցերը, մամուլի լեզվի ու բեմական խոսքին առնչվող հրատապ խնդիրները, հայ բարբառների ծագումն ու զարգացումը, հայ գրերի գյուտն ու Մեսրոպ Մաշտոցի դերը և այլն:

Նշված բոլոր խնդիրներին Գուրգեն Սևակն անդրադարձել է պատասխանատվության մեծ զգացումով: Հայ լեզվաբանության և առհասարակ հայագիտության ամենատարբեր բնագավառներում նա ասել է իր ծանրակշիռ խոսքը՝ դրանով իր արժեքավոր ներդրումն ունենալով հայրենի գիտության ու մշակույթի զարգացման գործում: Նա առաջ է քաշել մի շարք գիտական վարկածներ, որոնք իրենց հետագա լուսաբանությունն են ստացել իր իսկ աշակերտների կողմից:

Գուրգեն Սևակի գրչին են պատկանում տեսական և գործնական նշանակություն ունեցող բազմաթիվ ուսումնասիրություններ: Նա է մշակել 1940 թ. ուղղագրության մասնակի բարեփոխման սկզբունքները, գործում մասնակցություն է ցուցաբերել մեր լեզվի գիտական տառադարձության և տերմինակազմության սկզբունքների մշակմանը: Կյանքի վերջին տարիներին բազմավաստակ գիտնականը ղեկավարում էր ՀՍՍՀ ԳԱ գիտատեխնիկական տերմինաբանության խորհուրդը:

Վաստակաշատ գիտնականը կրթել է մի քանի սերունդ, պատրաստել հայագետ գիտնականների մի պատկառելի ջոկատ, որոնցից շատերն այսօր գիտության դոկտորներ են, պրոֆեսորներ, հայագիտական մտքի խոշոր ներկայացուցիչներ: Համալսարանում և զուգահեռաբար այլ բուհերում Գուրգեն Սևակը դասավանդել է ժամանակակից հայոց լեզվի տեսություն, հայոց լեզվի պատմություն, գրաբար, ոճագիտություն, լեզվաբանության ներածություն, վրացերեն: Ի դեպ, նա նշված առարկաներից մի քանիսի դասընթացների հեղինակն է: Այն, ինչ ստեղծել է պրոֆ. Սևակը, եղել է կայուն և բռնել է ժամանակի քննությունը. բավական է ասել, որ Գուրգեն Սևակի շարահյուսության դպրոցական դասագիրքը, առաջին անգամ լույս տեսնելով 1936 թվականին, այնուհետև ունեցել է 35 հրատա-

րակություն: Մատաղ սերնդի կրթության գործում ունեցած այդ մեծ վաստակի համար և ծննդյան 60-ամյակի կապակցությամբ Գուրգեն Սևակը հանրապետությունում առաջինը պարգևատրվեց Խաչատուր Աբովյանի անվան մեդալով, որը և նա համարում է իր բոլոր պարգևներից ամենաթանկագինը:

Ավելի քան 50 ասպիրանտներ է դեկավարել ճանաչված գիտնականն ու մանկավարժը, և նրա բոլոր սաներն էլ այսօր գիտության առաջամարտիկներ են: Սակայն այս ամենով չեն սպառվում պրոֆեսոր Սևակի գիտական հետաքրքրությունները. պետք է նշել նրա արժանիքները թարգմանչական գործում: Գուրգեն Սևակը մեծ դեր է խաղացել հայ գրականությունը օտար ընթերցողին մատուցելու պատվավոր և շնորհակալ գործում ևս: Հայտնի են հայ դասականներից (Թումանյան, Իսահակյան, Տերյան, Չարենց) կատարած նրա թարգմանությունները էսպերանտո միջազգային լեզվի: Ի դեպ, նա խորհրդային առաջին գիտնականներից է, որ դեռևս 1932 թվականին արժանացել է էսպերանտոյի միջազգային ակադեմիայի իսկական անդամի կոչմանը: Հայ գրողների բազմաթիվ երկեր թարգմանվել են աշխարհի տարբեր ժողովուրդների լեզուներով Գուրգեն Սևակի էսպերանտո թարգմանության հիման վրա: Այսպես, այսօր ճապոնացի և հրեա ժողովուրդներն իրենց մայրենի լեզուներով կարող են կարդալ Իսահակյանի «Աբու-Լալա Մահարին», որը ճապոներեն ու հրեերեն է թարգմանվել էսպերանտոյից:

Մեծապես գնահատելի են նաև Գուրգեն Սևակի ծառայությունները հայ-վրացական բանասիրության զարգացման գործում, որի կրքոտ ջատագովն էր նա: Պրոֆ. Սևակի նախաձեռնությամբ համալսարանում բացվեց հայ-վրացական բանասիրության կաբինետ, որը կրում է Շոթա Ռուսթավելու անունը: Գուրգեն Սևակը զգալի ավանդ ունի վրացի հայագետների պատրաստման և առհասարակ հայ և վրաց ժողովուրդների դարավոր կապերի ամրապնդման գործում:

Իր անձնվեր և անբասիր գիտական և մանկավարժական գործունեության համար նա արժանացել է Հայաստանի գիտության վաստակավոր գործչի բարձր կոչմանը:

Այսօր, երբ հայ գիտական հանրությունը, ակադ. Գուրգեն Սևակի բազմաթիվ սաները նշում են ականավոր հայագետի ծննդյան 100-ամյակը, մեկ անգամ ևս նրան ճանաչողների հիշողության մեջ հառնում է նրա մարդկային անբասիր կերպարը, որին մեկ բառով կարելի է բնութագրել՝ Ուսուցիչ:

*Ռ. ՍԱՔԱՊԵՏՅԱՆ*